ունին իրանց ծոցի մէջ ապահով ապաստանարան ապաւինողի համար:

Ատրպատականի հայը միշտ երեւում էր զինուորուած իր երկրագործական գործիքներով. նրա ձեռքում միշտ տեսնւում էր բահ, բրիչ, մանգաղ... Արիւն թափող եւ անձնապաշտպանութեան անօթների մասին նա գաղափար անգամ չունէր... Տաք կլիման թուլացրել էր նրա ուղեղը, նրա կենսական ոյժը... Իսկ հողագործութիւնը պահպանում էր նրա մէջ անասնական բթամտութիւնը եւ եզի համբերութիւնը:

Տարօնը, Վասպուրականը աւելի լեռնոտ եւ սառն երկիրներ էին... Բնակիչների գլխաւոր պարապմունքը անասնապահութիւնն էր... Նրանք միեւնոյն ժամանակ եւ երկրագործ եւ հովիւներ էին: Ձմեռը անցուցանում էին նրանք գետնափոր խրճիթներում, իսկ տարուան մնացած ամիսները չադրներում, լեռների բարձրաւանդակների վրայ:

Այստեղ, հայերի մի այսպիսի կիսա-չուական եւ կիսա-հաստատաբնակ կեցութիւնը տրւել էր նրանց բնաւորութեանը երկակենցաղ կենդանիների յատկութիւններ: Նրանց գետնափոր խրճիթներն իրանց ստորերկրեայ ոլորմոլոր խորշերով աւելի նման էին սողունների որջին եւ դա մտցրել էր բնակիչների մէջ օձի նենգութիւնը եւ նրա ոխերիմ չարամտութիւնը: Նա պատրաստ էր խայթել, եթէ յարմար միջոցներ գտնէր: Նրանց հովուական չադրները, կգմռուած լեռների բարձրաւանդակների վրայ, բազմագոչ ջրվէժների մօտ, շրջապատած հսկայական ժայռերով, որոտի եւ կայծակի ահեղ սպառնալեաց ներքոյ,— տուել էին նրանց բնաւորութեանը աւելի կիսավայրենի եւ կիսազազանային յատկութիւններ:

Հայը իր հայրենի լեռներին թէեւ հարազատ, բայց փնացած որդին էր: Քուրդը նրա մտերիմ որդեգիրն էր: Հայը ոչ կատարեալ երկրագործ էր եւ ոչ կատարեալ հովիւ: Քուրդը հաւատարիմ էր մնացել իր պարապմունքին. նա հոգով եւ սրտով հովիւ էր... Այս պատճառով նա տիրում էր:

Հովիւները միշտ տիրում են, որպէս իրանց հօտերին, նոյնպէս եւ մերձաւոր ժողովուրդներին: Մարդկութեան առաջին տիրապետողներն եղել են հովիւները: Մեր Հայկ նահապետը նոյնպէս մի քաջ հովիւ էր:

Տարօնի եւ Վասպուրականի հայը... վարում էր որպէս չուական, նոյնպէս եւ հաստատաբնակ կեանք: Իր գիւղում, գետնափոր խրճիթների մէջ, նա ապրում էր որպէս գազանը իր որջում. իր արտերի մէջ նա զինուորուած էր բահով եւ մանգաղով. իր լեռների արօտներում... հրացանով եւ թրով: Այսպիսի երկակենցաղ ապրուստը տուել էր նրան երկերեսանի բնաւորութիւն,— նա միեւնոյն ժամանակ նուաճեալ ժողովուրդ էր, հպատակի բոլոր համբերութեամբ... եւ կատաղի ապստամբ էր, եթէ միջոցները կը նպաստէին նրան:

Այս էր պատճառը, որ Կարօն շատ անգամ ասում էր. «Այս ժողովուրդից կարելի է մի բան սպասել, նա բոլորովին մեռած չէ, նա մի օր կը գցէ իր պարանոցէն քրդի լուծը»:

Կարօի զուշակութիւնը անհիմն չէր: Շատախի, Սասնոյ եւ Մոգաց երկրի հայերը, որոնք իրանց կենցաղավարութեամբ չէին զանազանւում քրդերից, բոլորովին ազատ էին եւ ինքնակալ»*)...

Անվիճելի ճշմարտութիւններ չեն, անշուշտ, այդ բոլոր դատողութիւնները, բայց կան այդտեղ ճիշդ ու առողջ դաղափարներ, որոնք կը վկայեն, որ այդ բնածին, ինքնուս, զարմանալիօրէն օժտուած Գրողը միանգամայն խորհող մարդ է — փիլիսոփայական մտակաղմով — լուրջ, խորունկ եւ ինքնատիպ:

* * *

Որքա՜ն լաւ էր ուսումնասիրել իր հարազատ ժողովուրդը, անոր պատմութիւնն ու առօրեայ կենցաղը, անոր դրացիները՝ քիւրդը, թուրքը, պարսիկը, ասորին, անոնց նիստ ու կացը, բարքերն ու հոգեբանութիւնը: — Վարպետ գրչով կը վերլուծէ եւ կը լուսաբանէ այդ ցեղերու յարաբերութիւնները, վարպետօրէն կը ցուցադրէ խափիրութեան, քրդական ֆէօդալիզմի մինչնաղարեան սիստեմը, որ իր ահարկու ծանրութեամբ ընկած էր թուրքահայ ժողովրդի վրայ... Անտարակոյս, առաջին հայ մատուռականն էր, որ մօտիկէն ճանչցեր ու նկարագրեր է ցեղադրական այդ զարհուրելի

*) «*Կայծեր*», *հատ. Ա. էջ* 309–314